

Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄ-ՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդաբանությամբ կանոնակարգվում են Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության (այսուհետ՝ ՊՀ և ՏԱՏ) կողմից՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի (այսուհետ՝ ռիսկի համակարգ) կիրառման հետ կապված հարաբերությունները:

2. Ռիսկի համակարգի ներդրման նպատակներն են՝

1) վերանայել, վերլուծել և դասակարգել վերահսկման օբյեկտները՝ ըստ դրանց հրդեհային ռիսկի գործոնների.

2) ձևավորել տվյալների բազա՝ ըստ շինությունների և տնտեսավարող սուբյեկտների, որը թույլ կտա ըստ ռիսկայնության դասակարգել վերահսկման ենթակա օբյեկտները.

3) ձևավորել հրդեհների վիճակագրական բազա, որը հնարավորություն կտա հզորացնել ՊՀ և ՏԱՏ-ի վերլուծական կարողությունները.

4) բարձրացնել առկա տեսչական ռեսուրսների բաշխման արդյունավետությունը՝ դրանք կենտրոնացնելով առավել ռիսկային օբյեկտների վրա:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մեթոդաբանության հիմնական հասկացություններն են՝

1) ռիսկ՝ վերահսկման օբյեկտում հրդեհի տեղի ունենալու հավանականության և հրդեհից ակնկալվող բացասական հետևանքների արտադրյալ.

2) կառույցի տեսակ՝ առանձին խմբավորած վերահսկման ենթակա օբյեկտներ, որոնք տարբերվում են միմյանցից կառույցի տիպային և նպատակային չափանիշներով՝

- ա. Ա - բազմաբնակարան շենքեր,
- բ. Բ - բնակելի առանձնատներ,
- գ. Գ - արտադրական շենքեր,
- դ. Դ - գյուղատնտեսական նշանակության շենքեր,
- ե. Ե - առևտրի օբյեկտներ (խանութ, շուկա և այլն),
- զ. Զ - առողջապահական հիմնարկներ,
- է. Է - պահեստներ,
- ը. Ը - բնագազազայցակայաններ,
- թ. Թ - հյուրանոցներ,
- ժ. Ժ - կրթական հաստատություններ,
- ժա. Ի - մարզամշակութային շինություններ,
- ժբ. Լ - սոցիալական նշանակության շենքեր (ծերանոց և այլն),
- ժգ. Խ - գրասենյակներ,
- ժդ. Ծ - հասարակական սննդի օբյեկտներ,
- ժե. Կ - կենցաղային սպասարկման օբյեկտներ,
- ժզ. Լ - մանկապարտեզներ,
- ժէ. Զ - այլ նշանակության օբյեկտներ.

3) ռիսկի վերլուծություն՝ ՊՀ և SUS-ի տրամադրության տակ առկա տեղեկատվության պարբերական վերլուծություն, որն իրականացվում է հրդեհի ծագման պայմանների և պատճառների բացահայտման, դրանց նույնականացման և հրդեհից ակնկալվող բացասական հետևանքների գնահատման համար.

4) ռիսկի չափանիշներ՝ նախապես տրված բնորոշիչներով սահմանված չափանիշներ, որոնց հիման վրա կատարվում է օբյեկտների նախնական ռիսկայնության գնահատումը:

Հետագայում ռիսկի չափանիշները կարող են ընդգրկվել ստուգաթերթերում տեղեկատվական հարցերի տեսքով.

5) ռիսկի գնահատում՝ կոնկրետ իրավիճակի և ճանաչված վտանգի հետ կապված հրդեհի ռիսկի քանակական և որակական արժեքի որոշում.

6) ռիսկի աստիճան՝ ռիսկի որակական և քանակական գնահատման արդյունք, այսինքն ռիսկի հավանական հետևանքների արտահայտում, այդ թվում՝ թվային.

7) ռիսկի պրոֆիլ՝ որևէ տարածքի վերահսկման ենթակա օբյեկտների ռիսկայնության տեղեկատվության ամբողջություն, որը ձևավորելու նպատակով տվյալ տարածքում գտնվող վերահսկման ենթակա օբյեկտները գնահատվում են ռիսկի չափանիշների օգնությամբ և այդ գնահատման արդյունքները դասակարգվում են համապատասխան մատրիցայում.

8) ռիսկային խումբ՝ ռիսկի միավորների միջակայք, որում ընդգրկված վերահսկման ենթակա օբյեկտները ենթակա են ստուգման՝ ըստ հստակ սահմանված հաճախականության.

9) գործունեության ոլորտ՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ. 2) համապատասխան գործունեության տեսակի ծածկագրի տակ նկարագրված գործունեության տեսակ.

10) բազային գիծ՝ ռիսկայնության միավոր, որից ցածր և բարձր միավոր հավաքած վերահսկման ենթակա օբյեկտները պատկանում են տարբեր ռիսկի խմբերի:

III. ՌԻՍԿԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Ռիսկի համակարգը ենթադրում է ՊՀ և SUS-ի կողմից ստուգման ենթակա բոլոր տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության գնահատում և դրանց վերահսկողության հաճախականության բաշխում՝ ըստ տվյալ սուբյեկտների ռիսկայնության աստիճանի:

5. ՊՀ և SUS-ի առումով՝ վերահսկման օբյեկտների ռիսկայնությունը հաշվարկվում է ոլորտային և անհատական ռիսկայնության գնահատականների հիման վրա, որի առավելա-

գույն հնարավոր արժեքն է 150 միավորը՝ 50-ը ոլորտային ռիսկի, իսկ 100-ը անհատական ռիսկի գնահատման հաշվին:

6. Ռիսկի համակարգի միջոցով ռիսկերի նախնական գնահատումն իրականացվում է հետևյալ քայլերի հաջորդականությամբ՝

1) քայլ 1. նախնական ռիսկի պրոֆիլի ձևավորման նպատակով ռիսկայնության գնահատման չափանիշների մշակում.

2) քայլ 2. մշակված չափանիշներով վերահսկման ենթակա օբյեկտների գնահատում.

3) քայլ 3. Երևան քաղաքի և մարզերի նախնական ռիսկի պրոֆիլների ձևավորում.

4) քայլ 4. մշակված ռիսկի պրոֆիլների հիման վրա կառույցների տեսակների ոլորտային ռիսկերի հաշվարկում.

5) քայլ 5. ստուգման արդյունքում ստուգաթերթերի ամփոփում և դրա հիման վրա օբյեկտների անհատական ռիսկայնության որոշում.

6) քայլ 6. ընդհանուր ռիսկայնության միավորի որոշման արդյունքներով՝ ստուգման ենթակա օբյեկտների դասակարգում՝ ըստ ռիսկայնության խմբերի:

7. Ռիսկի համակարգի միջոցով ռիսկերի հետագա գնահատումն իրականացվում է հետևյալ քայլերի հաջորդականությամբ՝ նախնական գնահատումից 3 տարի հետո՝

1) քայլ 1. ՊՀ և ՏԱ-ի յուրաքանչյուր տարածքային մարմնի ռիսկի պրոֆիլի ձևավորում անցած 3 տարիների ստուգումներից ստացված արդյունքների հիման վրա.

2) քայլ 2. ՊՀ և ՏԱ-ի յուրաքանչյուր տարածքային մարմնի մշակված ռիսկի պրոֆիլների հիման վրա կառույցների տեսակների ոլորտային ռիսկերի հաշվարկում.

3) քայլ 3. ստուգման արդյունքում ստուգաթերթերի ամփոփում և դրա հիման վրա օբյեկտների անհատական ռիսկայնության որոշում.

4) քայլ 4. ընդհանուր ռիսկայնության միավորի որոշման արդյունքներով՝ ստուգման ենթակա օբյեկտների դասակարգում ըստ ռիսկայնության խմբերի:

IV. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

8. Ոլորտային ռիսկը ՊՀ և ՏԱՏ-ի համար հաշվարկվում է համաձայն ռիսկի պրոֆիլի աղյուսակի, որի առաջին սնուշը համաձայն մեթոդաբանության մշակվել է ՊՀ և ՏԱՏ-ի կողմից գնահատման աշխատանքների արդյունքում: Յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ յուրաքանչյուր տարածքային մարմնի ռիսկի պրոֆիլը պարտադիր կարգով ենթակա է թարմացման անցած երեք տարվա ստուգման արդյունքների հիման վրա:

9. Ռիսկի համակարգի ներդրման փուլում ՊՀ և ՏԱՏ-ի համար մշակվել է 2 ռիսկի պրոֆիլ՝ Երևան քաղաքի ռիսկի պրոֆիլ և մարզերի ռիսկի պրոֆիլ: Երևան քաղաքի ռիսկի պրոֆիլը մշակելու նպատակով ռիսկայնության չափանիշների հիման վրա կազմված գնահատման թերթերով գնահատվել է 8050 վերահսկման ենթակա օբյեկտ, իսկ մարզերի ռիսկի պրոֆիլի համար՝ 10993

**Աղյուսակ N 1
Երևան քաղաքի ռիսկի պրոֆիլ**

	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ	Ի	Լ	Խ	Ս	Կ	Հ	Ձ	
50	625		65	1	162	25	10	12	8	55	23	1	50	55	59	12	50	1213
45	289		25		372	21	6	4	3	14	8		31	28	46	6	36	889
40	367		23		220	16	8	4	7	22	2		34	41	37	6	47	834
35	385		32		278	17	9	5	1	12	10		46	53	35	6	47	936
30	138		25		440	29	9	2	2	17	6		68	53	47	7	87	930
25	92		30		646	23	12	5	6	14	4	1	95	51	69	8	61	1117
20	18		15	1	622	29	8	2		7	2		66	27	68	5	52	922
15	31		18		277	22	11	1		4			48	23	41	4	34	514
10	27		4	1	160	11	4	1		1	1		23	13	22	1	21	290
5	39		5		231	6	5	1		4			34	20	30	5	25	405
	2011	0	242	3	3408	199	82	37	27	150	56	2	495	364	454	60	460	8050

Աղյուսակ N 2 ՀՀ մարզերի ռիսկի պրոֆիլ

	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ	Ի	Լ	Խ	Ս	Կ	Հ	Ձ	
50	442	0	184	9	879	109	6	127	41	285	98	4	193	85	46	113	211	2832
45	16	0	46	3	202	17	1	9	5	46	22	2	42	29	16	25	63	544
40	87	0	58	1	323	34	3	18	8	31	21	0	65	49	27	28	47	800
35	204	0	57	2	247	24	1	24	5	27	17	1	38	33	14	21	144	859

30	577	0	32	1	285	29	1	29	7	27	13	1	53	35	26	10	81	1207
25	76	0	49	5	321	19	4	29	3	42	15	1	61	33	27	8	64	757
20	31	0	50	0	767	40	1	21	4	58	7	0	65	44	39	17	122	1266
15	48	0	45	2	732	39	0	21	1	44	12	0	102	17	60	3	98	1224
10	156	0	17	1	328	21	0	13	1	37	3	1	60	10	23	4	73	748
5	59	0	15	2	344	28	0	19	1	29	3	0	81	5	41	4	125	756
	1696	0	553	26	4428	360	17	310	76	626	211	10	760	340	319	233	1028	10993

10. Համակարգի գործելուց երեք տարի հետո յուրաքանչյուր տարածքային մարմին պետք է մշակի իր տարածքի ոլիսկի պրոֆիլը և իր տարածքի ոլիսկերը կառավարի այդ պրոֆիլի հիման վրա:

11. Ռիսկի պրոֆիլը պետք է բացահայտի վերահսկվող օբյեկտների ոլիսկայնության ընդհանուր պատկերն ըստ կառույցների տեսակների և որոշի յուրաքանչյուր կառույցի տեսակի ոլորտային ոլիսկայնության արժեքը՝ ըստ միջին կշռված արժեքի:

12. Հավաքագրված տվյալները կիրառվում են վերահսկվող օբյեկտների ոլիսկայնության վերլուծության համար՝ բացահայտելով ամենաբարձր միավորներ ունեցող օբյեկտների տեսակները, ինչը թույլ է տալիս թիրախավորել վերահսկողությունը և առավել արդյունավետ օգտագործել տեսչության ռեսուրսները:

13. Երևան քաղաքի ոլիսկի պրոֆիլի ընթաննելիության պարզեցման համար ստորև տրված են մի քանի բացատրական օրինակներ՝

1) գնահատված օբյեկտների ընդհանուր քանակը՝ 8050.

2) ստուգված բազմաբնակարան շենքերի ընդհանուր քանակը՝ 2011 (Ա սյունակի հանրագումարը).

3) 2011-ից 625-ը գնահատվել են 50 միավորից բարձր, 289-ը՝ 45-50 միավոր և այդպես շարունակ.

4) ընդհանուր թվով 1213 օբյեկտ գնահատվել է 50-ից ավելի միավոր, 889-ը գնահատվել են 45-ի և 50-ի միջակայքում:

14. Ռիսկի պրոֆիլի ամփոփ N N 3 և 4 աղյուսակներում նշված են կառույցների տեսակների ոլորտային գնահատականների նշանակությունները՝ հաշվարկված համապատասխանաբար Երևան քաղաքի և մարզերի ռիսկի պրոֆիլներից:

Աղյուսակ N 3

Կառույցի տեսակը	Ռիսկի միավորը		Կառույցի տեսակը	Ռիսկի միավորը		Կառույցի տեսակը	Ռիսկի միավորը
Ա	39.8		Է	28.8		Խ	27.7
Բ	-		Ը	37		Ց	31.5
Գ	35.3		Թ	39		Կ	29.1
Դ	26.6		ժ	38.4		Հ	32.1
Ե	27		Ի	40.5		Ձ	29.7
Զ	29.7		Լ	37.5			

Աղյուսակ N 4

Կառույցի տեսակը	Ռիսկի միավորը		Կառույցի տեսակը	Ռիսկի միավորը		Կառույցի տեսակը	Ռիսկի միավորը
Ա	32.9		Է	38.2		Խ	29.5
Բ	-		Ը	35		Ց	34.7
Գ	35.6		Թ	41.6		Կ	25.6
Դ	29.4		ժ	34.4		Հ	41
Ե	27.7		Ի	40		Ձ	28.8
Զ	31.9		Լ	39			

15. Անհատական ռիսկայնությունը ՊՀ և ՏԱՏ-ի համար հաշվարկվում է ստուգաթերթերից ստուգումների արդյունքում ստացված գնահատականների հիման վրա: Ստուգաթերթի հարցաշարում ընդգրկված յուրաքանչյուր վերահսկողական բնույթ կրող հարց իր առջև ունի նաև ռիսկայնության միավոր, որը հարցում ֆիքսված պահանջը խախտելու դեպքում հաշվի է առնվում, իսկ այդ խախտումներից ստացված միավորների գումարն օգտագործվում է ստուգվող օբյեկտի անհատական ռիսկի միավորի հաշվարկման համար:

Անհատական ռիսկի միավորը որոշվում է հետևյալ բանաձևով՝ $R_{ai} = \frac{n_i}{n_{max}} \cdot 100$,

որտեղ՝

R_{ai} - անհատական ռիսկի միավորը, n_i - վերահսկողական բնույթի հարցերի պատասխաններից ստացված կշիռների գումարի արժեքն է,

n_{max} - վերահսկողական բնույթի հարցերի պատասխաններից ստացված կշիռների գումարի առավելագույն հնարավոր արժեքն է:

V. ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

16. Ըստ ռիսկային միավորների նվազման հաջորդականության՝ վերահսկման ենթակա օբյեկտները դասակարգվում են բարձր, միջին և ցածր խմբերի: Ընդ որում, բարձր ռիսկայնության խմբում ընդգրկվում են վերահսկման ենթակա օբյեկտների 20 տոկոսը, միջինում՝ ըստ նվազման կարգի մնացած 40 տոկոսը, իսկ ցածրում՝ նվազագույն ռիսկի միավոր հավաքած 40 տոկոսը:

17. Մինչև առաջին ստուգումը բոլոր վերահսկման ենթակա օբյեկտների անհատական ռիսկայնությունը համարվում է մաքսիմալ, ինչը թույլ է տալիս ստուգումների պլանավորման նախնական փուլում թիրախավորել այն օբյեկտները, որոնք չեն ենթարկվել ստուգման համակարգի ներդրումից հետո:

VI. ՌԻՍԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆ

18. Տվյալների բազայի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ առանց ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հնարավոր չէ իրականացնել ռիսկերի գնահատում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ՊՀ և ՏՍՏ-ին ապահովել իրեն

անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու հնարավորությամբ բոլոր այն մարմիններից, որոնք տիրապետում են նման տեղեկատվությանը:

19. Տվյալների բազաները բաղկացած են ծրագրային ապահովման վրա հիմնված «բաղադրիչներից», որոնք կառուցված են տեղեկություններ հավաքելու և պահելու համար, այնպես, որ օգտագործողը կարողանա որոնել, ավելացնել, թարմացնել կամ հեռացնել (ջնջել) այդ տեղեկությունները: Տվյալների բազան պետք է հնարավորություն ընձեռի ապագայում միանալու ազգային տվյալների պլանավորվող ծրագրին:

20. Տվյալների բազայի կառուցվածքն աղյուսակային է, բաղկացած է տեղեկատվական տողերից և սյունակներից: Տվյալների բազան դասավորված է ըստ դաշտերի, գրառումների և ֆայլերի: Դաշտը տեղեկության մեկ կտոր է, գրառումը՝ դաշտերի ամբողջական համալիր, ֆայլը՝ գրառումների հավաքածու:

21. ՊՀՏ-ում ձևավորվում է տվյալների բազա՝ ըստ ՊՀ և ՏՄՏ-ի կողմից վերահսկվող տնտեսավարող սուբյեկտների: Տվյալների բազան ներառում է նաև ստուգաթերթերում ներառված յուրաքանչյուր ստուգման ենթակա կազմակերպությունում գրանցված հրդեհների և տեխնաձին վթարների վերաբերյալ տվյալները:

22. Տվյալների բազայի նպատակն է՝

1) աջակցել տեսուչներին որոշումներ կայացնելու գործընթացում և ապահովել այդ որոշումների հիմնավորվածությունը.

2) ստանալ վերահսկման օբյեկտի ռիսկի դասակարգման և ստուգումների հաճախականության վրա ազդող միտումները:

23. ՊՀ և ՏՄՏ-ի նպատակներից ելնելով ստեղծվում է տեսչության կողմից վերահսկվող բոլոր սուբյեկտների գրանցամատյան (ռեգիստր): Ռեգիստրում գրանցվում են հետևյալ տվյալները՝

1) ՊՀ և ՏՄՏ-ի ռեգիստրում տնտեսավարող սուբյեկտի գրանցման համարը.

2) տնտեսավարող սուբյեկտի անվանումը (ներառյալ իրավաբանական անձանց ֆիրմային անվանումն ու կազմակերպական-իրավական ձևը), անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները (սերիան, համարը, ում կողմից է տրված և այլն).

3) պետական գրանցման կամ պետական հաշվառման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը.

4) պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը կամ վկայականի սերիան և համարը.

5) տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը.

6) տնտեսավարող սուբյեկտի գործունեության վայրը և կոնտակտային տվյալները (հեռախոսի համար և կապի այլ միջոցներ).

7) տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն), այդ թվում՝ հեռախոսը և կապի այլ միջոցներ.

8) տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումներում իրականացվող գործունեության տեսակները.

9) տնտեսավարող սուբյեկտների և նրանց առանձնացված ստորաբաժանումների պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ).

10) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու դեպքում տեղեկություններ լիցենզիայի մասին.

11) տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեությունն սկսելու ամսաթիվը.

12) տնտեսավարող սուբյեկտների օբյեկտների կառուցման (վերջին վերակառուցման ամսաթիվը).

13) տնտեսավարող սուբյեկտի աշխատողների թիվը.

14) հրդեհների և տեխնիկական վթարների դեպքերը.

15) տնտեսավարողի գործունեության վայրի մակերեսը.

16) կառույցի տեսակը համաձայն նպատակատիպային դասակարգման:

VII. ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

24. Ռիսկայնությունը որոշող չափանիշները, ըստ ստուգվող օբյեկտների, նշված

են N 5 աղյուսակում:

Աղյուսակ N 5

Գնահատման հիմքը	Չափանիշները	Բալերը						Մեկնաբանություններ/ նշումներ
		1	2	3	4	5	6	
Շինության նկարագրությունը	Հրակայունությունը /հարկերի քանակը/	1- 2	3- 6	7- 9		>10		շենքի բարձրությունը
	Ջրոյական նիշից ցածր գտնվող հարկերի քանակը	1		1- 2		>2		նկուղի մակարդակը
	Մակերեսը /շինության ընդհանուր մակերես/ /մ ² /							
	-արդյունաբերական տարածքներ	<300	300-500		500-1000	>1000		օդակայան, առևտրային կենտրոն, կինոթատրոնի համալիրներ, մետրո և այլն
	-հասարակական տարածքներ և այլն	<50		50-500		>500		
	Հրակայունության աստիճանը			3-րդ		4-րդ		
	Մարդկանց միաժամանակյա առկայություն տարածքում	<15	15- 50	50-300		>300		օդակայան, առևտրային կենտրոն, կինոթատրոնի համալիրներ, մետրո և այլն
	Շինության տարիքը	10- 20տ	20- 50	50-ից ավելի				
	Տարածքում մարդկանց գտնվելու տևողությունն օրվա ընթացքում /ժ/	<8		8- 16		16- 24		
Գիշերային ժամերին աշխատող հասարակական օբյեկտները					23:00-ից հաջորդ օրվա 06:00		գիշերային ակումբներ, ժամանցի վայրեր և այլն	
Տարածքից տարահանվելու համար օգնության կարիք ունեցող մարդկանց քանակը /սահմանափակ					<30	>30	հիվանդանոցներ, ծերանոցներ, մանկապարտեզ և այլն	

	շարժունակությամբ կամ շարժունակության բացակայությամբ մարդիկ/							
	Տարածքային և տարահանման ելքերին ծանոթ լինելը				Ծանոթ չեն			կապված հյուրանոցների, առևտրային կենտրոնների, երաժշտական դահլիճների և այլն
	Տարահանման ելքերը						խոչընդոտվում են	
Հրդեհային բեռնվածությունը	Դյուրավատ կամ այրվող հեղուկների առկայությունը /լ/			<100		100-1000	>1000	հեղուկ վառելիք և այլն
	Գազի շրջանառությունը						առկա է	
	Այրունակ նյութերի առկայությունը /կգ/քառ.մետր/		<10	10-30	>30			կարգերն ըստ SNIP - <<A,B &E>> ըստ ք/մ, համապատասխան զբաղեցմամբ ու օգտագործմամբ
Հրդեհածին արտադրական պատճառները	Բաց կրակ/բոց				առկա է			
	Շփումներից առաջացող կայծերը				առկա է			
	Կաթսաներից, վառարաններից, հնոցներից առաջացող վտանգները					առկա է		
	Ինքնաբռնկման հակում ունեցող նյութերի փոխազդեցությունը					առկա է		
Էլեկտրատեխնիկական պատճառները	Էլեկտրական լարերից առաջացող կայծերը					առկա է		տեղադրումն ու վիճակը <<շատ լավ, բավարար, վատ>>
/վտանգներ/	Էլեկտրական կոմուտատորային վահանակի/սարքավորման տեղակայման սենյակները				առկա է			
	Տրանսֆորմատորները /կվտ/	1			>1			
Հրդեհային անվտանգության համակարգերի պահանջը	/ակտիվ/							
	Ինքնաշխատ համակարգերը							նորմատիվ ակտերով պահանջվում է
	-հրդեհաշիջման						պահանջվում է	
	-ազդարարման						պահանջվում է	
	Արտաքին հրդեհաշիջման համակարգը						պահանջվում է	հակահրդեհային ջրավազան հիդրանտ
Ծխահեռացման համակարգը, օդի						պահանջ-		

	դիմհարի համակարգը					վում է		
	Գազի արտահոսքը որսող և ահագանգող համակարգը			առկա չէ				
	/պասիվ/							
	-հակահրդեհային պատնեշների առկայություն						բացակայում է	
	-տարահանման ուղիների առկայություն						բացակայում է	ելքի դռներ, ելքի նշաններ, վթարային լույսեր
Արտաքին վտանգավորությունը	Հակահրդեհային միջտարածությունները		>9մ	3- 9մ	<3			
	Հարևան տարածքների հրդեհավտանգավորության աստիճանը	ավելի ցածր	նույնը	ավելի բարձրը				արդյունաբերական, վտանգի բարձր աստիճան, դյուրավառ պահեստներ /խանութներ
Գերատեսչական հրդեհային պահպանության վիճակը	Վերապատրաստում, վարժանքներ					Բացակայում է		հրդեհային ուսուցման ձեռնարկ և կանոններ /տարեկան, կիսամյակային, ոչ մի
Գերատեսչական հրդեհային պահպանության խոչընդոտները	Օբյեկտի հասանելիության աստիճանը					սահմանափակ է	բացակայում է	բացակայում է, սահմանափակ է, հասանելի է
	Օբյեկտ հասնելու ժամանակը						նորմերից ավելի	
	Ջրամատակարարման առկայությունը						բացակայում է	
Տարածքի օգտագործման նպատակի փոփոխությունը	Հրդեհային համակարգերի փոփոխությունը					հնարավոր է		
	Հրդեհային բեռի փոփոխությունը					հնարավոր է		
	Շինարարական փոփոխությունները					հնարավոր է		
Գնահատման այլ սկզբունքները	Մշակութային արժեքների առկայությունը						առկա է	թանգարաններ, եկեղեցիներ, արխիվներ, օպերա և այլն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ